

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ն. Գ.

2003 թ. փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետությունը դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) 145-րդ անդամ-պետությունը: Անդամակցությունն ուներ ինչպես տնտեսական, այպես էլ կարևոր քաղաքական նշանակություն, քանզի դրանով մեկ անգամ ևս հաստատվեց մեր հանրապետության որդեգրած քաղաքականությունը տնտեսության ազատականացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ուղղությամբ:

Կարելի է պնդել, որ գործնականում յուրաքանչյուր երկիր, որը հավակնում է ժամանակակից արդյունավետ տնտեսության ձևավորմանը և լիիրավ մասնակցությանը համաշխարհային առևտրում, ԱՀԿ անդամ է կամ անդամակցության ճանապարհին է: Այդ առումով բացառություն չէր նաև Հայաստանի Հանրապետությունը: ԱՀԿ անդամակցությունը ընձեռում է բազմաթիվ առավելություններ, որոնք գործնական առումով կազմակերպության նպատակն են: Հայաստանի պարագայում, որպես անդամակցության հիմնական նպատակներ, կարելի է առանձնացնել հետևյալները. արտահանվող հայրենական արտադրության ապրանքների համար հնարավորինս նպաստավոր պայմանների ձեռքբերումը, առևտրային վեճերի լուծման միջազգային կառույցներին մուտք ունենալու հնարավորությունը, ԱՀԿ չափանիշներին երկրի օրենսդրական դաշտի համապատասխանեցման շնորհիվ բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, ԱՀԿ անդամ-պետություններում հայաստանյան ներդրողների համար հնարավորությունների ընդլայնումը, արտասահմանյան ապրանքների (ծառայությունների) և ներդրումների ներհոսքի շնորհիվ հայրենական արտադրանքի որակի և մրցունակության մակարդակի բարձրացման խթանումը, «մեկ պետություն՝ մեկ ձայն» սկզբունքով մասնակցությունը միջազգային առևտրի կանոնների մշակմանը՝ ելնելով ազգային շահերից, Հայաստանի՝ որպես միջազգային առևտրի լիիրավ մասնակցի հեղինակության բարձրացումը:

Փորձենք վերլուծել անդամակցության գործընթացը գյուղատնտեսության բնագավառի մասով և գնահատել դրա հեռանկարային ազդեցությունը ՀՀ ագրոպարենային համակարգի վրա:

ԱՀԿ շրջանակում միջազգային առևտրի իրականացման շուրջ բանակցությունների անքակտելի մասն էր կազմում գյուղատնտեսությանը վերաբերող խնդիրների ամբողջությունը: Բացի մաքսադրույքների տեսանկյունից, դրանք ներառում են ագրարային հատվածի պետական աջակցության և արտահանման լրավճարման ուղղությամբ ՀՀ քաղաքականության քննարկումը: Բանակցությունների ընթացքում ագրարային ոլորտին առնչվող հարցերով

փաստաթղթերի մշակման և տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու մարմինն էր ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Ի սկզբանե, ՀՀ բանակցությունները վարում էր ԱՀԿ Գյուղատնտեսության մասին համաձայնագրի շրջանակում զարգացող երկրի կարգավիճակ ստանալու ուղղությամբ, ինչն իր հերթին տալիս էր առավել արտոնյալ պայմաններ՝ իրավունքների և պարտավորությունների ստանձնման առումով: Բանն այն է, որ ՄԱԿ-ի դասակարգումն այստեղ կիրառելի չէր, քանզի ԱՀԿ շրջանակում երկիրը կարող է դիտվել որպես զարգացող, եթե բանակցային գործընթացում անդամ պետությունները չեն առարկում: Սակայն նշված հարցում Հայաստանը մերժում ստացավ, որից հետո բանակցությունները սկսեցին տարվել վերոնշյալ համաձայնագրով զարգացող երկրների համար նախատեսված առանձին արտոնությունների ձեռքբերման շուրջ, մասնավորապես, անդամ-պետությունների կողմից առաջարկվող՝ զարգացած երկրների համար սահմանված ներքին աջակցության 5%-ի փոխարեն 10 % նվազագույն դրույթի կիրառման կապակցությամբ (ԱՀԿ Գյուղատնտեսության մասին համաձայնագրի 6.4 ա և 6.4 բ հոդվածներ):

Աջակցության համախառն չափին (ԱՀԶ) են վերաբերում այն միջոցառումները, որոնք կարող են առավելագույնս ազդել առևտրի և արտադրության վրա (բուսաբուծությանը և անասնապահությանը տրվող լրավճարներ, նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում, արտոնյալ վարկավորում, գնային աջակցություն արտադրողներին, գյուղմթերքների փոխադրման համար տրվող արտոնություններ և այլն):

ԱՀԿ Գյուղատնտեսության մասին համաձայնագրի համաձայն, վերը նշված միջոցառումների նկատմամբ Հայաստանը պարտավորություն ստանձնեց սահմանելու աջակցության մակարդակը և հետանդամակցային տարիների ընթացքում սահմանված կարգով աստիճանաբար կրճատելու այն: Մրանք, այսպես կոչված, «դեղին զամբյուղի» միջոցառումներն են: Այն միջոցառումները, որոնք էական ազդեցություն չունեն առևտրի և արտադրության վրա և նպատակ չեն հետապնդում պահպանելու արտադրանքի գների մակարդակը, դասվում են, այսպես կոչված, «կանաչ զամբյուղին»: Դրանցից են, օրինակ, գիտական հետազոտությունները, կրթությունը, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունները, տարածաշրջանային զարգացման ծրագրերը, բերքի ապահովագրության ու աղետների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցումը և այլն: Աջակցության ֆիքսվող մակարդակը հաշվարկվում է որպես հիմնային ժամանակաշրջանի երեք տարիների ընթացքում ոլորտում պետության փաստացի կատարած ծախսերի միջինացված մեծություն: ԱՀԿ պետությունների կողմից Հայաստանի համար, որպես հաշվարկների հիմնային ժամանակաշրջան, առաջարկվեց ընդունել 1986-1988 թթ., որը, սակայն, չէր բխում հանրապետության շահերից, և հետագա բանակցությունների շնորհիվ պայմանավորվածություն ձեռք բերվեց որպես բազիս ընդունել 1995-1997 թթ. ժամանակահատվածը:

Համաձայն ԱՀԿ Գյուղատնտեսության մասին համաձայնագրի և լրավճարների ու փոխհատուցման միջոցների մասին համաձայնագրի դրույթների, Հայաստանը հայց ներկայացրեց ԱՀԶ ունենալու՝ վերջինիս մեջ ներառելով գյուղատնտեսական արտադրողներին տրամադրված հարկային արտոնությունները և վարկային ու ներդրանքային լրավճարները, որի շնորհիվ հաշվարկված ԱՀԶ-ն կազմեց ավելի քան 180 մլն ԱՄՆ դոլար: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանն ԱՀԿ շրջանակում միանգամայն օրինական դիրքորոշում էր ցուցաբերում, ԱՀԿ որոշ անդամ-պետություններ առարկեցին ԱՀԶ հաշվարկներում հարկային արտոնությունները ներառելուն: Հայաստանի դեպքում սա փաստորեն նշանակում էր ունենալ գրոյական ԱՀԶ: ԱՀԿ մի շարք անդամ-պետությունների խիստ դիրքորոշման հետևանքով Հայաստանը ստիպված էր ԱՀԶ հաշվարկման ժամանակ չներառել հարկային արտոնությունները և համաձայնել ներքին աջակցության նվազագույն մակարդակի 5 %-ի դրույթին՝ այն վերապահումով, որ հետագայում նույնպես Հայաստանին կթույլատրվի տրամադրել հարկային և ներդրումային արտոնություններ՝ առանց դրանք ներառելու ԱՀԶ հաշվարկի մեջ: Մակայն բանակցային գործընթացի հետագա փուլերում հայաստանյան կողմը ստիպված էր փոխել իր դիրքորոշումը և փաստացի անդամակցեց ԱՀԿ-ին առանց նախկինում հայցվող արտոնությունների և իրավունքների ձեռքբերման ու պարտավորվեց. 1. ներքին աջակցության մակարդակը սահմանափակել 5% նվազագույնով, 2. գրոյի վրա ամրագրել գյուղատնտեսության բնագավառում արտահանման լրավճարման մակարդակը, 3. վերացնել ԱԱՀ մասով արտոնությունները՝ համապատասխանեցնելով հարկային ռեժիմը ԱՀԿ սկզբունքներին, 4. չդիմել ԱՀԿ Գյուղատնտեսության մասին համաձայնագրի հոդված 6.2-ի դրույթներին:

Բացի այդ, ԱՀԿ անդամ-պետություններն առաջադրեցին ԱՀԿ նորմերին ՀՀ գյուղատնտեսության բնագավառում գործող հարկային համակարգի ներդաշնակեցման հարցը: Խնդրո առարկան այն էր, որ Հայաստանը գյուղատնտեսական արտադրողներին աջակցելու նպատակով սահմանել է զգալի հարկային արտոնություններ, մասնավորապես, ավելացված արժեքի հարկի գծով, այն դեպքում, երբ ներմուծվող գյուղատնտեսական արտադրանքը ենթարկվում է հարկման: Փաստարկվում էր, որ դա հակասում է ԱՀԿ ազգային մոտեցման դրույթին, ըստ որի, ներմուծող երկրում հայրենական և օտարերկրյա արտադրության ապրանքների նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել միևնույն մոտեցումը: Կարծում ենք, որ անդամակցության քաղաքական շարժառիթները գերակա ազդեցություն ունեցան գյուղատնտեսության բնագավառում կատարված զիջումների առումով:

Շուկայական տնտեսության Հայաստանի անցումը բնութագրվում է տնտեսության և, մասնավորապես, առևտրի ազատականացման բարձր մակարդակով: Այդ իսկ պատճառով, անդամակցության նախաշեմին Հայաստանը գործնականում արդեն իսկ գրեթե ամբողջությամբ ապահովել էր անդամակցության նախապայմանները և այս առումով, կարծում ենք, մոտ ապագայում անդամակցությունը չի հանգեցնի ներքին շուկայում ստեղծված իրավիճակի վատթարացմանը: Մակայն երկարաժամկետ կտրվածքով կարող են ծագել մի շարք

խնդիրներ, որոնց վաղաժամ գիտակցումն ու հաղթահարման ուղիների բացահայտումը պետության առաջնային հիմնահարցերից է:

Առաջին և ամենակարևոր վերահաս վտանգներից կարող է դառնալ գյուղատնտեսության բնագավառում կիրառվող հարկային արտոնությունների վերացման՝ Հայաստանի ստանձնած պարտավորության հետևանքով հնարավոր բարդությունների առաջացումը: Հայաստանը ստիպված եղավ փոփոխություններ մտցնել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում և վերացնել հարկային արտոնությունները գյուղատնտեսական արտադրողների համար: Փոփոխությունը ուժի մեջ կմտնի 2009 թ. հունվարի 1-ից: Ակնհայտ է, որ Հայաստանի ագրարային հատվածի համար ԱԱՀ-ի կիրառումը կարող է խիստ բացասաբար անդրադառնալ այդ հատվածի վրա, քանզի ներկայումս, երբ մասնավորեցման հետևանքով երկրում ձևավորվել են փոքր չափերի, մասնատված, ցածր արդյունավետությամբ 335 հազարից ավել տնտեսություններ, համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պարագայում հարկահավաքման գործընթացը կթողնի լուրջ բարդություններ: Բացի այդ, նման պարագայում չի բացառվում նաև չարաշահումների և «ստվերայնության» առաջացման հնարավորությունը: Այստեղ է ծագում փոխհատուցման կայուն համակարգի և համապատասխան մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Բնական է, որ Հայաստանի համար լրավճարների համակարգին անցումը բավական բարդ և ժամանակատար գործընթաց է: Այս պարագայում պետությունը բյուջետային հատկացումների հաշվին պետք է ձևավորի նոր ենթակառուցվածքներ՝ տրամադրվելիք լրավճարների բաշխման նպատակայնությունը վերահսկելու համար: Ակնհայտ է, որ այսօրվա պայմաններում պետությունն ունակ չէ իր լծակների գործադրմամբ հատուցել ներկայիս հարկային արտոնությունների վերացումը, ինչի հետևանքով կարող են բարձրանալ գյուղատնտեսական, հետևաբար, նաև սննդի ու վերամշակող արդյունաբերության արտադրանքի գները, ինչն իր հերթին երկրի ներսում կառաջացնի սոցիալական լարվածություն, հայկական գյուղատնտեսական ու պարենային ապրանքների մրցունակության անկում, ինչպես տեղական, այնպես էլ արտաքին շուկաներում: Մեր կարծիքով, հետանդամակցային այս ժամանակաշրջանում պետությունը հնարավոր ցնցումներից խուսափելու համար պետք է աստիճանաբար վերացնի հարկային արտոնությունները՝ դրանք փոխարինելով աջակցության այլ եղանակներով: Անհրաժեշտ է նաև ստեղծել ոչ պետական այնպիսի կառույցներ, որոնք գյուղատնտեսական արտադրողներին և ագրոպարենային համակարգի հաջորդ օղակներին կտրամադրեն արտոնյալ պայմաններով վարկեր: Այդ կառույցները պետք է ունենան համապատասխան ստորաբաժանում, որը կգրադվի գյուղատնտեսական և պարենային ապրանքների արտադրության նախընտրելի բնագավառների որոշմամբ, պոտենցիալ արտադրանքի իրացման հնարավորությունների վերլուծությամբ, և դառնալով ագրարային ոլորտի կարգավորման կարևոր գործիք, ագրոպարենային համակարգի տարբեր օղակները կուղղորդի դեպի մրցակցային առավելություններով օժտված բնագավառներ: Բացի այդ, գյուղատնտեսական և պարենային ապրանքների համար ԱԱՀ-ն անհրաժեշտ է սահմանել համեմատաբար ցածր մակարդակի վրա:

Մյուս կարևոր խնդիրը կապված է պետության կողմից բնագավառին տրամադրվող աջակցության հետ: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ պետության՝ բնագավառին տրամադրված փաստացի աջակցությունը կազմում է համախառն արտադրության ընդամենը 2%-ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «դեղին» զամբյուղով Հայաստանի համար նախատեսված է 10% շեմը (2009-ից՝ 5%) ակնհայտ է դառնում, որ կանխատեսվող ապագայում հանրապետության բյուջեի սուղ հնարավորությունների պայմաններում ցուցաբերվող աջակցությունը գործնականում չի կարող հատել ստանձնած պարտավորություններով նախատեսված սահմանագիծը: Նշված ենթադրությունում հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ աջակցության սահմանագիծը որոշվում է նախորդ տարվա համախառն արտադրանքի ծավալների հիման վրա, որոնք մեր երկրում կայուն աճի միտում ունեն: Բացի այդ, աջակցությունը կարող է տրամադրվել «կանաչ» կամ «կապույտ» զամբյուղով նախատեսված միջոցառումների շրջանակում: Այդ է վկայում զարգացած երկրների փորձը, որտեղ շատ դժվար է որոշել պետական աջակցության իրական չափը: Ակնհայտ է, որ ԱՀԿ անդամակցության ընթացքում ստանձնած պարտավորությունների շրջանակում գյուղատնտեսության պետական աջակցության սահմանագծին մոտենալը ոչ մոտ հեռանկարի հարց է:

ԱՀԿ անդամակցության հետևանքով ագրարային հատվածի վրա հնարավոր բացասական հետևանքների բացահայտման և վերլուծության համար կարևոր նշանակություն ունի արտաքին առևտրին վերաբերող հիմնահարցերի ուսումնասիրությունը: Ընդհանուր առմամբ, ագրոպարենային ապրանքների արտաքին առևտրի քաղաքականությունը ամեն մի պետության կողմից հիմնականում պարունակում է երկու առանցքային մոտեցում՝ երկրի պարենային անվտանգության ապահովումը և տեղական արտադրողների շահերի պաշտպանությունը: ԱՀԿ անդամակցությունից ի վեր շրջանառվում են այնպիսի կարծիքներ, թե այս կառույցին ինտեգրումը բացասաբար կանդրադառնա երկրի ընդհանուր առևտրային հաշվեկշռի վրա, կխորացնի ագրոպարենային ապրանքների գծով առևտրային բացասական սալդոն, ներմուծվող էժան ապրանքների ներհոսքի հետևանքով կտրուկ կվատթարանա տեղական արտադրության վիճակը, ինչն իր հերթին կվտանգի երկրի պարենային անկախությունը: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ազատ առևտրի քաղաքականություն. ներմուծման մաքսատուրքի առավելագույն դրույքաչափը սահմանված է 10%, իսկ արտահանման մաքսադրույքն ամրագրվել է 0%-ի վրա: Անդամակցության բանակցությունների ընթացքում ներմուծման մաքսատուրքի առավելագույն չափը սահմանվեց 15%: Ակնհայտ է, որ բոլոր հնարավոր վտանգները կորստորվելին նախքան անդամակցությունը և, բացի այդ, մինչ օրս չեն արձանագրվել այպիսի դեպքեր, երբ մեր երկրի կառավարության կողմից առևտրային կարգավորումներում կատարվեն ծայրահեղ փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, միջազգային փորձը վկայում է, որ արտաքին առևտրային կազավորումներում երկրների կտրուկ քայլերը, որպես կանոն, առաջացնում են առևտրային գործընկեր երկրների դժգոհությունը և հաճախ հանգեցնում բացասական հետևանքների:

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով մաքսատուրքի գրոյական դրույքաչափ է նախատեսվում մի շարք գյուղմթերքների, գյուղա-

տնտեսական արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ արտադրամիջոցների, պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, սերմերի և կենդանիների ներմուծման համար: Այսինքն, այն ամենը, ինչը սեփական ուժերով դեռևս անհնար է արտադրել, կամ արտադրության հնարավորությունները սահմանափակ են, կարող է խթանել հայրենական ագրոարդյունաբերությունը ներմուծման բարենպաստ մաքսային ռեժիմով: Ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների համար 10% մաքսային դրույքաչափը սահմանվել է այն մթերքների նկատմամբ, որոնք բավարար քանակությամբ են արտադրվում երկրում, կամ առկա է որոշակի ներուժ՝ աստիճանաբար ընդլայնելու տեղական արտադրությունը: Կարծում ենք, որ նման ապրանքների նկատմամբ 15% մաքսատուրքի սահմանումն առավել նպաստավոր պայմաններ կստեղծի տեղական արտադրողների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ մաքսային օրենսգրքով գյուղատնտեսական ապրանքների ներմուծման համար նախատեսված են, սակայն գործնականում կիրառություն չեն գտել սեզոնային դրույքաչափերը, դրանց կիրառումը մոտ հեռանկարում կարող է բավական օգտակար ազդեցություն ունենալ ագրոպարենային ապրանքների առևտրային հաշվեկշռի վրա: Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ զարգացած ագրոարդյունաբերական համալիր ունեցող բոլոր երկրներում սեզոնային դրույքաչափերը սակագնային կարգավորման անփակտելի մասն են:

Միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում էական նշանակություն է ձեռք բերել տրանսպորտի գործոնը, ինչը կրկնակի կարևորություն ունի ագրոպարենային ապրանքների առևտրի բնագավառում՝ կապված դրանց ծավալային բնույթի հետ: Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը հայտնվեց տրանսպորտային շրջափակման մեջ՝ պայմանավորված տարածաշրջանային հակամարտությամբ: Այսօր հանրապետություն բերվող բեռների գերակշռող մասն անցնում է Վրաստանի տարածքով, որտեղ դրանց նկատմամբ սահմանված են բավական բարձր դրույքաչափեր, որոնք կրկնակի բարձր են ադրբեջանական բեռների նկատմամբ կիրառվող դրույքաչափերից: Համաձայն ԱՀԿ սկզբունքների, եթե ԱՀԿ անդամ-պետությունը կիրառում է դրույքաչափերի արտոնություն մեկ երկրի նկատմամբ, ապա պարտավոր է այդ արտոնությունը տրամադրել մնացած բոլոր անդամ-պետություններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը ԱՀԿ մասնակից պետություններ են, անհրաժեշտ է բարձրացնել այս հարցը: Մեր խորին համոզմամբ, կառավարության հետևողական մոտեցման պարագայում տարանցիկ բեռնափոխադրումների համար սահմանված դրույքաչափը հնարավոր է էականորեն նվազեցնել, որի շնորհիվ հայկական ապրանքների վերջնական գներն էականորեն կնվազեն, կբարձրանա գնային գործոնով պայմանավորված հայրենական արտադրանքի մրցունակությունը, ինչն իր հերթին կարող է արտահանման ծավալների ընդլայնման լուրջ խթան դառնալ:

ԱՀԿ անդամակցությամբ պայմանավորված՝ Հայաստանի առջև բացվող հեռանկարներից անհրաժեշտ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Հանրապե-

տությունը տնտեսական կապեր ունի մի շարք երկրների հետ, որոնք դեռևս ԱՀԿ անդամներ չեն, սակայն դրանց մեծամասնությունը ցանկություն է հայտնել անդամակցելու այս հեղինակավոր կառույցին, իսկ, ինչպես արդեն նշվել է, ԱՀԿ շրջանակում բոլոր որոշումները կայացվում են փոխհամաձայնության սկզբունքով և, բանակցությունների ժամանակ օգտագործելով այս «խաղաքարտը», Հայաստանը կարող է գործնականում առավել նպաստավոր դիրքեր հաստատել ԱՀԿ նորեկ անդամ-պետությունների հետ հարաբերություններում:

ԱՀԿ անդամակցության հաջորդ հեռանկարը կապված է միջազգային նորմերին Հայաստանի օրենսդրության ներդաշնակեցման, ինչպես նաև երկրի միջազգային վարկանիշի բարձրացման շնորհիվ տնտեսության, այդ թվում՝ ագրոարդյունաբերության մեջ օտարերկրյա ներդրումների և նոր տեխնոլոգիաների ներգրավման հետ: Ճիշտ է, կարճաժամկետ ապագայում այս բնագավառում ոչ մի էական փոփոխություն չի արձանագրվի: Հարկ է փաստել, որ ներկայում ագրոպարենային համակարգում կատարվող օտարերկրյա ներդրումների գերակշիռ մասը բաժին է ընկնում միջազգային ծրագրերին կամ սփյուռքին, սակայն երկարաժամկետում առկա է մեծ ներուժ՝ օգտվելու կապիտալի շուկաների միջազգայնացման հեռանկարներից՝ պայմանավորված ԱՀԿ անդամակցությամբ: ԱՀԿ անդամակցությունը կարող է լավ նախադրյալ լինել երկկողմ համաձայնագրերի, ինչպես նաև տարածաշրջանային տնտեսական գոտիների ձևավորման համար:

Այսպիսով, ԱՀԿ անդամակցությունը կարևոր քայլ էր համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրվելու գործում, և երկրի առջև բացվող հեռանկարների շահավետ օգտագործումը կարող է նպաստել ինչպես ագրոարդյունաբերության, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացմանը:

## **ВСТУПЛЕНИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ВО ВСЕМИРНУЮ ТОРГОВУЮ ОРГАНИЗАЦИЮ И ЕГО ВЛИЯНИЕ НА АГРАРНЫЙ СЕКТОР ЭКОНОМИКИ**

ГРИГОРЯН Н. Г.

### **Резюме**

Республика Армения 5 февраля 2003 г. стала полноправным членом Всемирной Торговой Организации (ВТО). Вступление в ВТО имело как экономическое, так и важное политическое значение, ибо это еще раз утвердило взятый курс на либерализацию экономики и углубление интеграционных процессов в целях расширения взаимовыгодной торговли. Однако вступление РА в ВТО может иметь как положительное, так и отрицательное влияние на аграрный сектор Армении, ибо аграрный сектор – одна из самых уязвимых отраслей национальной экономики.

Предлагаемые нами рекомендации призваны устранить возможные негативные последствия в сфере агропромышленного комплекса республики в краткосрочной и долгосрочной перспективе.